№ 132 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 19

1908

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 19 № 132

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ցայսնում ենք ի գիտութիւն հայ դպրոցների

ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ

եւ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ,

որ Ուսուցչական Միութեան Կենտրոնական Վարչութեան կից կազմվել է ժամանակաւոր բիւրո, որ միջնորդ է հանդիսանալու պաշտօնի որոնող ուսուցիչ-ուսուցչուհիների և ուսուցիչների կարիք ունեցող հոգաբարձութիւնների միջև։

Առանձնապէս հարկ ենք համարում շեշտել, որ բիւրոյիս օժանդակութեան կարիք ունեցող հոգաբարձութիւնները բարեհաճեն օր առաջ մեզ իմաց տալ, որպէսզի մենք ժամանակ ունենանք ըստ հնարաւորութեան շուտով գոհացուցիչ տալ։

Հասցէ՝ Тифлисъ, Сурпъ-Нишанское училище.

Центр. Правл. Арм. учит. и учительн. на Кавказѣ.

Ուսուցչ. Միութեան ժամանակաւոր բիւրо
(հ. ու.) ա 2—1

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻ

Արդուրեան չորսդասեան օրիորդաց դպրոցի համար

Հարկաւոր է

աւագ-ուսուցիչ բարձրագոյն կամ ժանկավարժական կրթութեամբ (ուսուցչական ինստիտուտաւորտ), շաբաթական 14 դաս, տարեկան 1200 ռուբ. ռոճիկով։ Խնդիրները վկայագրերով պէտք է ուղարկել մինչև յուլիսի 15-ը այս հասցէով՝ Александрополь, Приходскому попечительству армянской церкви св. Богородицы.

Ս. Աստուածածնի ծխ. հոգաբարձութիւն.
(ե. հ. շ.) ա 10—1

Առաջիկայ 1908—09 թ.

Ուսումնական տարում

Բանալով Քաժոյեան ս. Նշան օրիորդաց դպրոցի V բաժնումը, դպրոցի վարչութիւնը յայտնում է իր գիտութիւն ծնողների, որ ընդունելութեան խնդիրները, ուսման և ծննդեան վկայականի հետ, պէտք է ներկայացնել մինչև օգոստոսի 28-ը։

Տարեկան ուսման վարձ՝ 30 ռուբլի, որի կէսը, տասնհինգ ռուբլին, պէտք է տալ ընդունվելուց անմիջապէս յետոյ։

Քննութիւններ սկսվում են սեպտ. 1-ից և տեւում մինչև 5-ը։

Դիմել դպրոցիս գրասենեակը՝ հեռեւալ հասցէով՝ Тифлисъ, Сурпъ-Нишанское женск. училище.
(հ. շ.) ա 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Հարկաւոր է

Նկարչութեան մասնագէտ ուսուցիչ

Շաբաթական 14 դաս, դասագինը 50 ռուբ.։ Խնդիրներ ընդունվում են մինչև յունիսի 15-ը։ Միւս առարկաներից ազատ դասեր չը կան, այդ պատճառով դպրոցի հոգաբարձութիւնը ստացած խնդիրները չէ կարող յարգել։ Հասցէն՝ Тифлисъ, попечительству Маріинско-Анановскаго женскаго училища.
(ե. հ.) ա. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է,

որ վերաբնութիւններն եւ նորեկների ընդունելութիւնը

տեղի կունենան օգոստոսի 25-ին, ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 1-ին։ Դպրոցում մի քանի ազատ տեղ կայ միմիայն VI և նաբաբաց VII դասարաններում։ Նորեկների խնդիրները ընդունվում են մինչև օգոստոսի 25-ը։
(յուն. 17, 19 և օգ. 15, 20) ա. 4—2

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆԸ

սեկնեց Էսքէնատկի։
ա 3—2

ՀՈԳԻՑ ԲԱՐՁՐ

II

Ամեն մի եւրոպացի, որ մուտք է գործում մեր երկրի խորքերը, հետաքրքրվում է կովկասեան ազգերի նիստ ու կացով և ամբողջ կենցաղավարութեամբ։

Եւ անտարակոյս՝ նա միշտ մի ծանր հիասթափութեան զգացմունքով է նայում հայկական գիւղերին իրանց ստորերկրեայ բնակարաններով։

Նա տեսնում է քսաներորդ դարում այն, ինչ որ Քսենոֆոնը նկարագրել է դեռ Կիւրոսի օրերում։

Արդարև՝ եւրոպացին լսել է և կարդացել, որ հայը կուլտուրական ազգ է, որ հայը հակված է եւրոպական քաղաքակրթութեան, որ հայը աշխատում է իրանից թօթափել խաւար դարերից ժառանգութիւն մնացած կենցաղակերպը, փոխարինելով նրան արդի եւրոպականով. այո, լսել է նա այդ բոլորը, բայց այն, ինչ որ նա յստակ և տեղեկանում է Անդրկովկասում, իրրև ականատես, պարզում են նրա առաջ անմխիթարական պատկեր։ Նա տեսնում է, որ երկիրը և ժողովուրդը դեռ շատ աննախանձելի վիճակի մէջ են, որ նոյնիսկ մարդկանց բնակարանները ոչ մի բարեփոխութեան չեն ենթարկվել նաև այն փոքր ի շատէ բարեպատեհ հանգամանքներում, որոնց մէջ ապրում է հայ ժողովուրդը մօտ մի դար շարունակ։

Մենք լաւ գիտենք, որ ժողովրդի կարիքները աւելի բազմազրեալ և խոր են, քան նրա բնակարանների բարեփոխութեան հոգսը։ Մենք լաւ գիտենք, որ հրապարակի վրա կանգնած են կրթական, վարչական, տնտեսական բազմաթիւ հարցեր, որոնք սպասում են իրանց լուծման։ Եւ մենք ամենևին չենք ցանկանում, որ այդ կարևոր խնդիրները մի րոպէ թուլանան և սեղմվեն։ Ոչ։ Բայց և այնպէս գիւղական տների բարեփոխման հարցը մնում է առաջնակարգ հարցերից մէկը, որը պէտք է ստանայ գործնական կեանքի մէջ դրական ազդող լուծում, իրրև հերթական հոգատարութեան առարկաներից մէկը։

Քաղաքակրթութեան ձգտող կուլտուրական մի ազգ, ինչպէս հայն է, պէտք է լաւ գիտենայ, որ անկարելի է շարունակել մնային կենցաղավարութիւնը ստորերկրեայ տներում գիւղի ընդհանուր անկարգ ու անկանոն կեանքի մթնոլորտում։

Մեր գիւղացին պէտք է վերջնականապէս և կտրականապէս հրաժարվի իր ստորերկրեայ բնակարաններից և փոխադրվի աւելի լուսաւոր և աւելի վայելուչ բնակարանների մէջ։ Դա շռայլութեան քմահաճոյք չէ, այլ անհրաժեշտութեան պահանջ։

Եւ այդ պահանջը պէտք է բաւարարութիւն ստանայ գործնական քայլերով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 17 յունիսի

Պիշօնը, պատասխանելով նախագահի՝ Ռուսաստան այցելելու դէմ սոցիալիստների ուղղած բողոքներին, ասաց.

«Ես բողոքում եմ այստեղ արտասանված այն ճառերի դէմ, որոնք դէմ են ճշմարտութեան, շօշափում են մեր հայրենասիրութիւնը և մեր շահերը։ Ես չեմ խօսի Ռուսաստանի ներքին քաղաքականութեան մասին, որովհետև ես ինձ համար կանոն եմ դրել՝ երբէք չը խառնվել այն վիճաբանութիւններին, որոնք քննադատում են օտարազգի պետութիւնների ներքին քաղաքականութիւնը։

«Ես խորապէս ցաւում եմ, որ այդ օրինակ ամբաստանութիւններ եղան ամբիոնից, որովհետև նրանք չեն կարող ծառայել ոչ Ֆրանսիայի ուժեղացման, ոչ էլ օգուտ կը բերեն նրան։

«Դիմում եմ պատի միջազգային վայելչութեան զգացմունքին, քաղաքական գիտակցութեան և հայրենասիրութեան և խնդրում եմ նրան՝ արդարացի գնահատութիւն տալ նախագծի դէմ ուղղված բողոքներին և առանձնապէս այն արտայայտութիւններին, որոնցով ջանացին նախագիծը բեկանել։

«Մեր դաշնակցութիւնը Ռուսաստանի հետ առաջվայ նման ծառայում է մեր ներքին քաղաքականութեան հիմքը։ Մենք ոչ միայն մտադիր ենք պահել նրան այն ձևով, ինչպէս կտակել են նրան մեզ մեր նախորդները, պահպանելով ընդմին նրա խաղաղասէր բնաւորութիւնը, այլ և վճռել ենք նրան ամեն տեսակ վէճերից դուրս դնել և չը խնայել ոչինչ, որպէսզի նա աւելի հաստատուն դառնայ»։

Դէպուտատն տեղից. «Շատ լաւ»։

Պիշօնը շարունակում է.

«Հանրապետութեան տեսակցութիւնը ռուսաց Կայսրի հետ—դա այն տեսակ քաղաքական մի ցոյց է, որ ես գարմանում եմ, թէ ինչպէս կարող ենք մենք չողջունել նրան միասիրտ։ Այդ տեսակցութիւնը տեղի կունենայ այնպիսի ժամանակ, որպիսին առանձնապէս նպաստաւոր է մեր համաձայնութիւնը ամրացնելու ռուսաց կառավարութեան և ռուս ժողովրդի հետ՝ հանուր աշխարհի առաջ վկայելու համար մեր դաշնակցութեան առաւել խաղաղ և հաշտարար բնոյթը, դաշնակցութեան, որը կարող է ոչ սպառնալ որևէ մէկին, ոչ էլ անհանգստացնել։

«Ես հաւատացած եմ, որ դուք կըմբռնէք օգուտը և պատեհութիւնը ճանապարհորդութեան, որ հետեւելով նախագահի կողմից եղած միւս այցելութիւններին, մատնանիշ կանէ հանրապետութեան վատակած, գրաւած և պահած նոր համակրանքների վրա. դրանցով նա մտադիր է օգտվել սոսկ հաշտութեան նպատակներով եւրոպական ժողովուրդների միջև համաձայնութիւն հաստատելու համար։

«Ես չեմ կասկածում, որ կանգ չառնելով արտայայտված բողոքների առաջ, որոնք նոյն չափով ապարդիւն են ըստ էութեան, ինչ չափով անընդունելի ըստ ձևի (ծափահարութիւն ձախակողմից, կենտրոնից և աջակողմից. բողոքներ ծայրայեղ ձախակողմից), դուք ձայն կը տաք յօգուտ նախագծի, որ ներկայացված է ձեր քննութեան»։ (Ծափահարութիւն ձախակողմում, կենտրոնում և աջակողմում։) («Հ. Գ.»)

—

«Русь» լրագիրը հաղորդում է, որ յուլիսի սկիզբներում ֆրանսիական դեսպան ազմիրալ Տուշարը գնալու է Պարիզ և ապա ֆրանսիական հանրապետութեան նախագահի Ռուսաստան դալու ժամանակ կը վերադառնայ Ռուսաստան։

Բեվելում նախագահին ողջունելու կը գնան նաև Պետերբուրգի ֆրանսիական դաղութի անդամները, որոնք այդ նպատակով ուղարկելու են յատուկ պատգամաւորութիւն։ Պատգամաւորների ընտրութեան խնդիրը քննվելու է ֆրանսիական բարեգործական ընկերութեան յատուկ ժողովում։

Ի պատիւ ֆրանսիական հանրապետութեան նախագահի կազմված հանդիսին, ֆրանսիական դեսպանից բացի, ներկայ են լինելու նաև զինուորական և ծովային գործակալները։

Նախագահի դալու ժամանակ Բեվելում ներկայ կը լինեն պաշիզեան թերթերի 30 իր աւելի թղթակիցներ։ Նոյնքան ներկայացուցիչներ կը լինեն նաև Գերմանիայի, Աւստրիայի ու Զվեյցիայի լրագիրների կողմից։

—

Վաշինգտոն, 17 յունիսի

Բուկվէլտի կարգադրութեան համաձայն, Տեխասում կանգնած զօրքերի հրամանատարին հրամայված է մեկնիկայի սահմանը այնքան զօրք ուղարկել, որքան հարկաւոր կը լինի կարգ ու կանոնը պահպանելու և սահմանը պաշտպանելու համար։ («Հ. Գ.»)

—

Արտաքին գործերի մինիստրութեան տուած տեղեկութիւններից երևում է, որ մէջլիսում բաստ մտած պարսիկների հետ տեղի ունեցած հրացանաձգութեանը մասնակցող պարսկական կօզակների բրիգադայի մէջ են գտնվում 8—10 ռուս ինստրուկտօրներ, որոնց հրամանատարն է գնդապետ Լեխովը։

Մինիստրութեան մէջ դեռ ևս բոլորովին պարզված չէ, թէ ինչպիսի վերաբերմունք պիտի ցոյց տալ դէպի այն հանգամանքը, որ մեր ինստրուկտօրները, կօզակների բրիգադայի զործողութեան ժամանակ, ինչպէս երևում է հեռագիրներից, եղել են նրանց շարքերում. մինչդեռ այդ ինստրուկտօրների անմիջական պարտականութիւնն է զօրքի ուսուցումը—զինավարժութիւնը և դաստիարակումը։

Վիրաւորված ռուս ինստրուկտօրների մասին յունիսի 11-ին, ցերեկը, դեռևս պաշտօնական տեղեկութիւն ստացված չէ եղել։

Պարսիկների կողմից թշնամական գործողութիւններ Պարսկաստանում ապրող ռուսների նկատմամբ, մինիստրութեան ստացած տեղեկութիւնների համաձայն, հազիւ թէ կարելի լինի սպասել, քանի որ Ռուսաստանը միանգամայն չէ միջամտում և մտադիր էլ չէ միջամտել Պարսկաստանի ներքին գործերին։ Ոչ մի վտանգ չէ սպառնում ռուսական միսսիային Թէհրանում ևս։ («Слово»)

—

«Бирж. Вѣд.» լրագրի՝ գլխաւոր զինուորական շտաբի ասիական բաժնից բաղած տեղեկութիւններից երևում է, որ Թէհրանի պարսկական կօզակների բրիգադայի հրամանատարն է մեր գեներալի շտաբի գնդապետ Վ. Պ. Լեխովը, որը գտնվում է կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարութեան իրաւասութեան ներքոյ։

—

Պարսից կառավարութիւնից Բէյրութի զէպքերի առիթով լիակատար բաւարարութիւն ստանալուց յետոյ, արտաքին գործերի մինիստր Իզվոլսկին, ինչպէս «Вечеръ» լրագիրն է ասում, մնում է բարձրագոյն թոյլատրութիւն խնդրել վարձատրութիւն տալու, իրրև յատուկ օգորմութիւն, այն պարսիկ բնակիչներին, որոնք բոլորովին անմեղ կերպով են վնասվել։

—

Թաւրիզ, 17 յունիսի

Այսօր հրացանաձգութիւնը չը վերսկսվեց, բայց քաղաքում դեռ կրկին լուզալից տրամադրութիւն է։ Գիշերս եղան կողոպուտի դէպքեր։ Կողոպտել են մի քանի պատուաւոր անձանց հարուստ տներ։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 17 յունիսի

Սալմաստից հաղորդում են, որ բիւրզերը գրաւել են հայկական հիւսուրց Դէրիկ վանքը, որ գտնվում է Սալմաստի մօտ։ Երէկ երեկոյեանից գալիս են Բահիմ-փաշայի ձիաւորները։ Տեղ-տեղ նրանց ցոյց է տրված դիմադրութիւն. կատաղած ձիաւորները խաժամուժ ամբոխի հետ միասին անկարգութիւններ են անում։ Ազգաբնակութիւնը օրըստօրէ սկսում է աւելի և աւելի անհանգստանալ և յուսահատութեան մատնվել։ Յեղափոխականների հակառակորդները, իրանց մէջ ոյժ զգալով, չընդունեցին ռուսաց հիւպատոսի առաջարկը և չը հաշտվեցին։ («Հ. Գ.»)

—

Աջակողմեան ֆրակցիաների ձգտումը՝ միանալ և իրանց գործունէութիւնը կազմակերպել իրրև հակակշռութիւն հոկտեմբերականների, առայժմ ուշացնում է անաջող։

Պուրիշկեվիչի գրասենեակում հարցապնդում են պատրաստում։ հաւաքում են տեղեկութիւններ հրէաների մասին, նոյնպէս և ուղղափառութիւն ընդունողների ու պետական ծառայութեան մէջ գտնվողների վերաբերմամբ։

Ընդդիմեան նոր միութեան մէջ, առաջիկայ ընտրութիւնների պատճառով, արդէն սկսված է պայքար, որը սպառնում է կազմալուծել նրան։ («Б.»)

—

Պետերբուրգ 17 յունիսի

Պետական Դուման երեկոյեան փակ նիստում, հակիրճ վիճաբանութիւններից և զինուորական մինիստրի բացատրութիւններից յետոյ, ընդունեց այն օրինագծերը, որոնցից առաջինով 92 միլիոն ռուբլի է յատկացվում պահեստի զինուորների համար, իսկ երկրորդով՝ 48,000 ռուբլի ռազմական ճանապարհներ որոնելու համար արևմտեան սահմանային տարածութեան վրա։ («Հ. Գ.»)

—

Մօտ ժամանակներս մտադրութիւն կայ վերացնել Լեհական Թագաւորութեան մէջ բաց մնացած երեք գեներալ-նահանգապետների պաշտօնները՝ Վարշավայի, Պետրոկովսկի և Կելեցկու շրջանների։ («Պ. Հ.»)

—

Լոխվիցա, 17 յունիսի

Ժողոված տեղեկութիւնների համաձայն, սոսկալի մրրիկը և կարկուտը հեղեղի հետ յունիսի 10-ին բոլորովին ոչնչացրել են Լոխվիցայի գաւառի եօթ տեղերում ծխախոտի մնկարանները, բանջարանոցները, ցանքսերը — հինգ հազար դեսեատինից աւելի։ Կորան 6 մարդ, խեղդվեցին շատ եղջիւրաւոր անասուններ, ոչխարներ և ձիեր։ Կործանված են բաւու 13 ջրաղացներ, փչացել է երկաթուղագիծը։ Վնասները 600,000 ռուբլուց անցնում են։

Կարմիր խաչի կոմիտէտը և գաւառական զեմստվոյի ձայնաւորները ժողով գումարեցին։ («Հ. Գ.»)

—

Տիրասպոլ, 17 յունիսի

Գաւառի զանազան մասերում կարկուտը ոչնչացրել է 1700 դեսեատին։ Վնասները հասնում են 80,000 ռուբլու։ («Հ. Գ.»)

—

Բեսարաբիա, 17 յունիսի

Օկա գետը բարձրացաւ երեք արշին։ Պլաշկաուտնի կամուրջը ջուրը տարաւ։ («Հ. Գ.»)

—

Կարուգա, 17 յունիսի

Մինչև յունիսի 14-ը շարունակվող անձրևները երկրորդ հեղեղ առաջացրին։ Բանջարանոցները, արօտատեղերը և դարմանացանի մի մասը ջրի տակն են։ Վնասվեցին շատ կամուրջներ։

Մէդինսկի գաւառում հեղեղի պատճառով Գօլարդի և Գոնչարովի թղթեղէնի ֆաբրիկաներում աշխատանքները կանգ առան։ («Հ. Գ.»)

—

Սեվաստոպոլ, 17 յունիսի

Կատարված խուզարկութիւնների առիթով ոստիկանութիւնը ձերբակալեց սոցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան զինուորական կազմակերպութեան խմբակին։ Ընդամենը ձերբակալված են 26 հոգի, որոնցից 15-ը զինուորներ են։ («Հ. Գ.»)

—

Բոզէ (Նօրվէգիա), 17 յունիսի

Այսօր առաւօտեան, արեւելեան ուղղութեամբ, զգացվեց ուժեղ երկրաշարժ, որ տեւեց մի քանի ըոպէ։ Երկրաշարժ տեղի է ունեցել ուրիշ տեղերում ևս։ («Հ. Գ.»)

—

Դեղաբորգ, 17 յունիսի

Տեղս աշխատանքի եկած 350 անգլիացիների պատճառով տեղի ունեցան փոքրաքանակ մեծ անկարգութիւններ։ Ամբոխը յարձակվեց ոստիկանութեան վրա քարերով։ Եղան մի քանի կրակոցներ։ Մի քանի մարդ վիրաւորվեցին։

Փայտապահեստներում սկսվեց մեծ հրդեհ։ («Հ. Գ.»)

—

Կ. Գուլիս, 17 յունիսի

Ռուսաց նաւատորմիղը Զունդլատկում և Հերակլիի նաւահանգստում

ԴԱՎԱՖԱՍՈՅՏ ԴԱՎԱԶԴ

(«Հ. Գ.»)

Գրեթե 10 տարի է անցել Դավաֆասոյտ Դավազդի մահից։ Նրա հիշատակին նվիրված հոդվածներ, գրքեր, հանրագիտարաններ, գրականության պատմություններ, գրաքննադատներ, գրքի գրախոսներ, գրաբարագետներ, գրաբարագիտներ, գրաբարագիտներ, գրաբարագիտ

Ռուսիանոլու — պարսկական-սահման. երկաթուղագծի կառուցման աշխատանքների վարչության անունով հրատարակված հրամանում հաղորդվում է, որ ճանապարհների հաղորդակցության մինիստրը, հետևելով անդրկովկասեան երկաթուղիներից, առանձին գոհունակ խօսքերով արտայայտեց այն տպաւորությունը, որպիսին թողել են նրա վրա Թիֆլիսից Կարս և մինչև Զուլֆա վերջին տարիներս կառուցված երկաթուղագծերը։ Ընդհանուր մինիստրը յանձնարարել է աշխատանքների կառավարիչ ինժեներ Վուերցելին նրա անունից գնորհակալություն յայտնել այդ գործում նրան աջակցություն ցոյց տուողներին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Յունիսի 17 ին Լեվ Խիզեկելի ընակարանից, որ գտնվում է Կլաստիչնոկի փողոցում, անյայտ անձեր նրա բացակայության ժամանակ գողացել են 145 բուբլու զանազան անցյալն իրեր։

Յուլիսի 17-ին թոյն է ընդունում նախկին թաղական վերակացու Առուշվի կին Նինան։ Նրա կեանքը վտանգից դուրս է։ Նա մի նամակ է գրել, որով ինդրում է իր օրէնքներին կարգին կեանք վարել։ Բընութիւն է կատարվում։

Յունիսի 17-ին, առ. ժամը 10-ին, ԱՀանեան փողոցում, № 18 տանը, վեՀի ժամանակ Տավտարաձէ անունով մէկը գանակով վիրաւորել է Եակով Կուզբիանովին։ Տավտարաձէն ձերբակալված է։

Յունիսի 17-ին, «Золотая Якорь» հիւրանոցում մի անյայտ ժարդ ընդունում է կօրբօլեան թթուտ։ Նրան անզգայ դրութեան մէջ տանում են հիւանդանոց, ուր նա վախճանվում է։

Յունիսի 17-ին, անդրկ. երկ. մեքենավարի օգնականի կին Վասիլի Լակտիոնովա Եվդոկիան յայտնել է ոստիկանության, որ նոյն օրը նրա բացակայության ժամանակ նրա ժարդը լցվել է իր 12-ամեայ աղջկան։ Քնութիւն է կատարվում։ Լակտիոնովը ձերբակալված է։

Յունիսի 17-ին, երեկ. ժամը 5-ին, Բասէյնի փողոցում, ոստիկանությունը նկատում է կասկածելի մի խմբակի, որը, ոստիկանության ժամեանով, դիտում է փախուստի։ Նրանցից ձերբակալվել են Ալէքսանդր Կասաշվիլի, Սերգեյ Տուրաշվիլի և Բուլթայիսի ազգական Պր. Գրիգոնիա։ Նրանցից առաջինի ժամ, խուզարկելու ժամանակ, գտնվել է «Պարաբելում» սիստեմի ատրճանակ, 17 փամփուշտ։ Ոստիկ. գործակալների տեղեկություններին նայած, կասաշվիլին հանդիսանում է զենապան Երեւանցիների ժարդասպանը։ Խմբակը ապասելիս է եղել հայրենասէր Գլոտովի անցնելուն, որի պատկերը գտնված է Կասաշվիլու մօտ։ Քնութիւն է կատարվում։

Յունիսի 18-ին, առ. ժամը 8-ին, նահանգական բանտում կախաղան հանեցին Վլադիմիր Զէլանէին և Կոնստանդին Զուլկովին, որոնց դատապարտել էր այդ պատժին կովկասեան նահ. զինուորական դատարանը։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

Պարսից հիւպատոսը մօտ օրերս խնդրել է Բագուի քաղաքագլխին ծառայության վերընդունել փողոցները աւելող գործադուլարարներին։ Այդ դիմումին քաղաքագլուխը պատասխանել է, որ ծառայության վերընդունել կարելի է նրանցից մի քանիսին միայն, որոնց մեղաւորությունը ապացուցված չի լինի, իսկ միւսներին վերընդունել անկարելի է։ Դրանով էլ վերջացել է հիւպատոսի միջամտությունը։

Երեխաների ժահացության դէմ ժարքառող ընկերության նախագահ Սև քաղաքի նաւթարդիւնաբերողների խորհրդի երեխաների հիւանդանոցի բժիշկ Դենդեսը նպատակ դնելով դիւրացնել ժառայող շոֆերին քաղաքում մնացող չքաւոր դասի թոյլ ու հիւանդ երեխաների վիճակը, դիմել է տեղական միլիոներ՝ բարերարներ Հ. Զ. Ա. Թաղիեվին և խնդրել զինել Մարգաքիանի իր դատարկ ամարանոցը այս ամառ երեխաների գաղութ հիմնելու նպատակով։ Մի քանի շահագրգռված անձանց ներկայությամբ համաձայնություն տալով Թաղիեվը, սակայն, վերջ ի վերջոյ հրաժարվեց զինել ամարանոցը։ Այն ժամանակ բժիշկ Դենդեսին օգնության հասաւ Մուրթուզա Մուխտարովը, որը ոչ միայն ուրախությամբ զինեց Մարգաքիանում ունեցած 8 սենեակներից բաղկացած իր ամարանոցը, այլ և նուիրեց 100 բուբլի երեխաների ծախքերը հոգալու համար։ Իրանց առողջությունը կազդուրելու նպատակով լաւ օդափոխության կարօտություն ունեն 100 հոգի, բայց որովհետև ամարանոցը այդ բոլորին տեղաւորել չէ կարող, ուստի նրանք պիտի բաժանվեն 2 մասի, որոնք և հերթով ամառվայ կէսը պիտի անցկացնեն այնտեղ։ Առաջին մասը արդէն փոխադրվել է։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Եկատերինեան երկաթուղագծի վրա, հրատարակված հրամանի համաձայն, ինչպէս «Рус. Пр.» լրագիրն է ասում, «երկաթուղային ծառայողներին և այն բոլոր անձանց, որոնք ապրում են երկաթուղուն յատկացված հողերի վրա, արգելվում է թոյլատրել կողմնակի ժարդկանց ապրելու իրանց բնակարաններում և կամ նոյնիսկ դիշերելու իրանց ժամ թողնել բացի իրանց ընտանիքի անդամներից, ուրիշ որևէ մէկի, առանց նախապէս թոյլտուություն ստանալու տեղական երկաթուղային ժանդարմերիական ոստիկանության պաշտօնական հայից»։ Այդ հրամանը խախտողներին սպառնում է խիստ տուգանք, մինչև անգամ ծառայությունից արտաքսում։

Զոլոգդա ապրանքային կայարանում չէր պահանջված ապրանքների թուում կայ մի հակ, որը պարունակում է իր մէջ Դուբրօվինի «Զհուգը գալիս է» աշխատությունի բազմաթիւ օրինակները և Դուբրօվինի իր սեփական լուսանկարները։ Այդ հակը գնահատված է 48 ռ.։

Բիրայի ոստիկանությունը աջողվել է գտնել «ազատ սիրոյ լիգա» կազմակերպողներին։ Գարզվել է, որ այս ձմեռ Բիրայում ապրող Կիեվի համալսարանի ուսանող Ս. իր կնոջ հետ միասին, որը մանկաբարձուհի է, վճռում է հիմնել «ազատ սիրոյ լիգա»։ Սկզբում նրանք փորձում են ագիտացիա մղել այդ նպատակով տեղական ընկերությունների մէկի անդամների—ուսանողների ու օրիորդների մէջ, բայց աջողություն չեն ունենում։ Թէ ուսանողները և թէ օրիորդները հրաժարվում են մասնակցել լիգային։ Այն ժամանակ «հիմնադիրները» իրանց ուշադրությունը դարձնում են միջնակարգ դպրոցներում։ Սովորող ժանուկների վրա։ Ինչպէս ասում են, երկու գիմնազիստուհիներ արդէն հաճայնություն են տուած լինում լիգայի անդամ դառնալու, բայց հէնց առաջին հրաւերաթուղթը ժողով գնալու համար՝ ընկնում է նրանցից մէկի ժոր ձեռքը։ Վերջինս հաղորդում է ոստիկանությանը և հետևանքը լինում է այն, որ խուզարկում են լիգայի «հիմնադիրների» բնակարանը։ «Р. М.» լրագրի ասելով, խուզարկությունը բաւականին մերկացուցիչ նիւթեր է տալիս։ Այդ նիւթերի մէջ ամենագլխաւոր տեղը բռնում է ա. Ս.-ի օրագիրը և «ազատ սիրոյ լիգայի» կանոնադրությունը, որ գրված է իր սեփական ձեռքով։ «Հիմնադիրները» կալանաւորված են։

«Clos Warsz.» լրագիրը արժանահաւատ աղբիւրներից հաղորդում է, որ իշխանությունը մերժել է լեհական առևտրական ուսումնարանների դիրեկտորների յայտնած խնդիրը՝ այդ դպրոցների սաների ուսածները բարձր դասարաններ փոխադրելու ժամանակ ստուգելու համար յատուկ կառավարչական մանաժողով նշանակելու մասին։ Այդ ճանապարհով մանաւանդ դպրոցները նպատակ ունէին ձեռք բերել մանկի հաւասարությունն այն արտօնությունների մէջ, որ վայելում են պետական դպրոցները։

ՄԱՄՈՒԼ

«Закавказье» թերթը (№ 135) մի առաջնորդող յօդուածով շօշափում է այն հարցը, թէ ինչպէս այն անձինք, որոնք կոչում էին իրանց «յեղափոխական», որոնք հանդէս էին եկել ժողովրդի պաշտպանների դերում, արուեստական կերպով առաջ բերին սրված յարաբերություններ հասարակության զանազան դասակարգերի մէջ, ազգային կարգերի հողի վրա, իսկ դրանց հետևանքն եղան սպանություններ, կողոպտումներ, հրդեհաձգություններ և ապա արիւնահեղ վրէժխնդրություններ։ Այդ ամենը ազդարար ազդեցություն ունեցաւ կեանքի վրա գիւղում նրանով, որ ազգաբնակության աշխատաւոր մասը տնտեսապէս քայքայվեց և նրա առաջաւոր, գիտակից մասը բարոյապէս և քաղաքականապէս ճնշվեց։ Իրանց «յեղափոխական» կոչող գործիչները, վերածելով յեղափոխությունը այնպիսի հասկացողության, որ ոչ մի կապ չունի յեղափոխության հետ, հասցրին խեղճ գիւղացիներին այն գրութեան, որ նրանց վրա ծանրացաւ ձախ կողմից անիշխանության լուծը, իսկ աջ կողմից բռպրէսիաները։

Այդ աղէտալի հետևանքների մասին լրագիրը մեզադրում է հասարակությանը, որ անպատասխան դնվեց, որպէսզի «մրրկի և թափի» շրջանում պահպանէ իր անձնական եսը և պաղարիւնությամբ հոգ տանէ իր շահերի բաւարարության մասին։ Անգօր լինելով, նա, հասարակությունը, հեշտությամբ տեղի տուեց յեղափոխական ոյժերի յարձակման և հլուրէն տարաւ կամայականությունը այն անձանց, որոնք յեղափոխության հետ կուելու պատրուակով ոչնչացնում էին գիւղում հասարակական կեանքի նոյնիսկ կայծերը։

Լրագիրը, ինչպէս կարելի է հասկանալ, խօսում է Վրաստանի գիւղի մասին, բայց այդ ամենը ճիշտ է և մեր հայ գիւղի մասին։ Այդտեղ՝ հայ գիւղում ևս մեր «յեղափոխական» կոչված փրկիչները մեռցրին հասարակական ինքնագիտակցությունը, քայքայեցին գիւղացուն բարոյապէս և տնտեսապէս, և այդ քայքայման հետևանքները երկար ու երկար տարիներ պէտք է զգայ հայ ժողովուրդը։

*

Կան հարցեր, որոնց զգուշությամբ պէտք է շօշափել և որոնց գնահատությունը զգուշությամբ պէտք է կատարել։

Նոյն «Закавказье» թերթը, խօսելով հայոց դրամատիկական ընկերության գործունէության մասին, ասում է, թէ «բոլոր հայկական կուլտուրա լուսաւորական ընկերությունների մէջ, որոնք հետամուտ են լայն դաստիարակչական էստետիկական նպատակների, Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերությունը պատկանում առաջին տեղը»։ Եւ իրաւ ապացոյց դրա՝ յօդուածագիրը առաջ է բերում այն հանգամանքը, որ այս տարի (ուրեմն մէկ տարի միայն) ընկերությունը ոչ թէ ինքն է պահել հայոց թատրոնը Թիֆլիսում, այլ առնկակցել է միայն գերասանական ընկերակցությանը, այսինքն նպաստ է տուել միայն թատրոնին։

Արժանաւորությունը գնահատել շատ լաւ է և պարտաւորական է, բայց ասել, թէ դրամատիկական ընկերությունը առաջին տեղն է պատկանում հայոց բոլոր կուլտուրական-լուսաւորական հաստատությունների մէջ, չափազանցություն է։ Աստուած ապ, որ նա կարողանայ նոյնիսկ երբոր և չորրորդ տեղը գրաւել։

Չափազանցությունները կարող են միայն մեղցնել լաւ գործը և համեստ գործիչներին մեծամտության մէջ ձգել։

*

Բօլդարիայում հրատարակվող ամբողջական «Ռազմիկ» թերթը իր ոչ պակաս արտօրանչակ Զարդարեան խմբագրի բերանով, խօսելով Փ. Բալասանեանի «Դրականություն և կեանք» շարադրությունի մասին, ասում է, որ նա «Մշակի» և «Հովի» երկրորդ ապագրությունն է և յետադիմական հոսանքների արտայայտիչ։ «Մշակի» նման։ «Դրականություն և կեանք» թերթին իրան ենք թողնում պատասխանել, բայց մեզ ծիծաղելի է թւում այն հանգամանքը, որ առաջադիմության կամ շրջանակության մասին խօսում են ովքեր—«Ռազմիկը» և Զարդարեանը։ Առաջադիմություն և «Ռազմիկ», ճշմարտություն և Զարդարեան—իրօք ծիծաղել միայն կարելի է։ Բայց ամեն մի բան կը պարզվի, եթէ մեր ընթերցողները իմանան, որ «Ռազմիկը» թայֆայական օրգան է, նաև փողոցային թերթ. այդ տեղից և նրա կրճատումն առաջանց դէպի «Մշակը»...։

*

«Իրաւունք» թերթը, հաղորդելով որ յայտնի քիւրդ չարագործ Ղասըմ-բէկ ողջ և առողջ է, թէև Դաշնակցությունը իր օրգանների բերանով պարծեցաւ, թէ նա տերբօրի է ենթարկված, կցում է, որ «սա էլ Խանասորի Շերիֆ-բէկի ողջնալուն նմանեցաւ»։ Այժմ վախ կայ, որ չը լինի հռչակաւոր դաշնակցական մանրիչ Դաւիթը, «որուն ծանուցեալ սպանումը 100 հայերու մահուան պատճառ եղաւ, չողջնայ»։

Սնապարծությունը միշտ մարդկանց ծիծաղելի դրության մէջ է ձգում...

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 16 մայիսի

Կարդացի «Մշակի» № 103-ում Ն. գ. Սօլոլակի ճիւղի ա. դաս. դաստիարակ Ց. Բաբասեանի նամակը, որով նա պատասխանում է, ուրեմն և հերքում նոյն թերթի № 68-ում գրած իմ նկատողությունները։

Շատ ուրախ եմ, որ պ. Ց. Բաբասեանը յայտնում է, թէ այդ օրատետրը, իսկ ըստ պարոնի՝ յուշատետրը, պատկանում է այդ ա. դասարանի աշակերտին, որ ես աւելորդ էի համարել պարզելու իմ նամակումս, չը կամենալով նրան անձնական բնոյթ տալ, որովհետև նպատակս էր միայն փաստը հրապարակ հանել։

Այժմ տեսնենք, թէ որ չափով պարոնը հերքում է իմ գրածները։ Իմ նամակում ես ասում էի, ա) որ մի ամբողջ դասարան մի ամիս (գրածիցս շատ պարզ երևում էր, որ խօսքս փետրվարի 7—28-ի մասին է, թէև կարող է պատահել, որ հէնց սկզբից լինի. քանի որ 7-ին էլ հայոց լեզուի «շարունակությունն» է եղել, ռուսաց լեզու 7-ին չեն ունեցել, իսկ 8-ին «սիմնոյնը») ի զուր գնացել եկել է, ունենալով շարունակ «սիմնոյնը». բ) որ ուսուցիչը մի ամսվայ ընթացքում նոյնիսկ մի անգամ չէ հետաքրքրվել, թէ այդ թոյլ աշակերտը դասերը ուղիղ է մուծում տետրում թէ ոչ։

Պարոնը չը ժխտելով այդպիսի օրատետրի գոյությունը *) հայոց և ռուսաց լեզուից շաբաթական հինգական դաս ունենալը **), որ իրան յայտնի է եղել թէ ում և ինչ նպատակով է տրված եղել այդ օրատետրը աշակերտին, ասում է.

«Հայոց լեզուի ինն դասից երեքը տրված է «Զարվադարներ» յօդուածին, որ երեք և կէս երեսից է բաղկացած, երկուսը՝ գրաւոր աշխատանքների. սրանցից մէկի («Վարդանանց պատերազմը»—շարադրություն) նախապատրաստության համար գործադրվել է մի դաս առանձին։ Մի դաս տրված է այդ երկու գրաւոր աշխատանքների սխալների բացատրությանը (կէս դաս իւրաքանչիւր անդամ)։ Երկու դաս տրված է քերականական վարժության, որոնց համար նիւթ է եղել յիշեալ յօդուածը։

«Ռուսաց լեզուի տասն դասի ընթացքում անցած է երկու յօդուած. 1) Какъ узнали люди, что такое громъ и молнія—երկու և կէս երեսից, 2) Дикіе лебеди—երեք երեսից։ Այս յօդուածները կարդացվել-պատմվել են և դարձել են քերականական վարժության նիւթ»։

Թողնելով ուսուցիչներին դատելու, թէ որպիսի առաջադիմություն է ուել դաս նուիրելը (մէկը դուրս եմ գալիս, որ գործադրվել է «Վարդանանց պատերազմը» շարադրության նախապատրաստության դասմամբ) մի «Զարվադարներ»-ի նման դիւրին յօդուածին, թէկուզ երեք և կէս երեսից բաղկացած. կամ 10 դաս ռուսաց լեզուի վերոյիշեալ յօդուածների կարդալ-պատմելուն, ընդունենք մի րօպէ, որ իրօք աշակերտները «ի զուր չեն գնացել-եկել», հապա երկրորդին ինչ էք ասում։

Դուք, որ գիտէիք այդ աշակերտի թուլությունը, գիտէիք որ ծնողները ուուել են այդ օրատետրը (որը դուք ձեր ձեռքովն էիք կազմել) երեխային, որպէսզի նրանով միջոց ունենան հետևելու և հետը պարապելու, ուրեմն և գէթ մի փոքր պէտք է առաջադիմություն ցոյց տար այդ ամսում, առաջադիմություն ցոյց տար այդ ամսում, բայց իրօք նա մնում է դարձեալ նոյն բոլոր, ասում եմ գիտենալով այդ բոլորը ինչպէս չէիք հետաքրքրվում իմանալու պատճառը. գոնէ շաբաթը մի անգամ ստուգէիք այդ բոլ աշակերտի (որոնց թիւը շատ քիչ պէտք է լինի ձեր դասարանում, քանի որ ձեզանում «գործադրվում է աւանդածը հէնց դասարանում իւրացնել տալու եղանակը») չարաբաստիկ օրատետրը, թէ ուղիղ է մուծում օրատետրը, և սխալը նկատելով իսկոյն նկատողություն գրում այնտեղ, որ ծնողները գիտակից լինէին այդ բանին։ Չէ՞ որ ուսուցչի բարոյական պարտքն է հետևելու իւրաքանչիւր աշակերտի արածին, նամանաւանդ թոյլերի. ընդունակները առանց այն էլ սովորում են։ Դուք այդ չէք արել, բաւականացել էք միայն ծնողաց յայտնելով, որով ձեր պարքը կատարած էք համարել, ուստի և ոչ մի միջոցի չէք դիմել դրան ուղղելու։ Իմ կարծիքով, աւելի լաւ է ոչ թէ մի, այլ երկու ամիս «սիմնոյն» դասը մնար, քան պարզվէր ձեր այդպիսի անտարբերությունը դէպի ձեզ յանձնված մանուկ սերունդը։

Ինչ վերաբերում է ձեր նամակի երկրորդ մասին, թէ իմ երեսը ձեր դպրոցում տեսնված չէ այդ առիթով և թէ ինչպէս կարող էր այդ աշակերտը իմ որդիս լինել, ինձ յիշեցնում է մի փոքրիկ պատմություն։ Մէկին մեղադրում էին, որ նա պատուհանով ներս է մտել սենեակը և բան տարել, իսկ նա աշխատում էր այդ հերքել, ասելով՝ ինքը պատուհանով չէ ներս մտել, այլ դռնով։

Այդ աշակերտը իմ որդին է եղել թէ մի ուրիշի, ինձ էք յայտնել թէ նրա հօրը, ես եմ շնորհակալություն արել թէ հայրը, այդ բոլորին հետաքրքրական չէ. գլխաւորը կատարված փաստն է, իրողությունը և ոչ թէ անձնաւորությունը։ Ի զուր ձեկանությանց հանելի էք ընկել. և ապա եթէ մի փոքր լայն հայեացքով նայէք որդի խօսքին և շատ սահմանափակ մտքով չը հասկանաք, կը տեսնէք, որ ոչ թէ միայն ձեր կնոջից ծնված է ձեր որդին, այլ և ձեր քրոջից, հարսից և բոլոր նրանք, որոնք գտնվում են ձեր խնամատարության տակ և որոնցից ես, փառք Աստուծոյ, շատ ունեմ, ի թիւս որոնց և ձեր յիշեալ աշակերտը։

Օգտվելով դէպքից չեմ կամենում պ. Բաբասեանին պարտական մնալ իր տուած խորհրդի առիթով—նախ քան հրապարակ հանելը պարտականություն համարէի Սօլոլակի ճիւղին իմ ժամոյ ծանօթանալ—ասել. կարծում ենք սխալվելը մեծ յանցանք չէ, բայց սխալը տեսնել ու չը խոստովանվելը և ուրիշի վրին փաթաթելը աւելի մեծ յանցանք է։ Եւ երկրորդ՝ մանուկը շատ բան կասվի, կը գրվի, բայց այդ բոլորից պէտք է հեռու լինի մանուկ սերունդը...

Ց. Շահնազարեան

—

Շուշի, 10 մայիսի

Շուշի քաղաքի մեղրեցոց ս. Աստուածածին եկեղեցու ծխական դպրոցի հոգաբարձությունն և նոյն եկեղեցու երէցփոխը իրանց խորին շնորհակալությունն են յայտնում պ. պ. Իվան Յովհաննէսեանցին, Դաւթ Ոս. Արիստակէսեանցին և Լեոն Դաւթեանցին, որոնք, աչքի առաջ ունենալով մեր նպաստակարօտ դպրոցի և նրա աղքատ ու որբ աշակերտների անտանելի վիճակը, նուիրեցին առաջինն՝ ի յիշատակ իր հանգուցեալ եղբայր Թէոդորոսի միանուագ մի հարիւր բուբլի, երկրորդը՝ իր հանգուցեալ հայր Ոսկանի՝ մեր եկեղեցուն մի սաղաւարտ ու դպրոցին 25 ռ., բոստանալով 25 ռ. նուէրը շարունակել ամեն տարի, և երրորդը միանուագ 10 ռ.։ Կայայտնենք, որ հայրենիքից հեռու մեր քաղաքացիները, հետևելով վերոյիշեալ պարոնների բարի օրինակին, կաջակցեն մեզ դպրոցի վիճակը բարւոքելու։

Հոգաբարձություն

—

Ախալցխա, 4 մայիսի

Ախալցխայի ուսումնատենչ հայ օրիորդները, տեղիս ծխական դպրոցն աւարտելուց յետոյ, չունենալով նիւթական և այլ միջոցներ՝ աւելի բարձր դպրոցներում իրանց ուսումը շարունակելու համար՝ իրանց ձեռք բերած ուսման խղճուկ պաշարն էլ ժոռանալու կամ, ինչպէս ասում են, «տոպրակի մէջ դնելու» վիճակին են դատապարտում։ Իսկ պատրաստված և, որ գլխաւորն է, ձեռնարկ ու մարդասէր անձնաւորություններ, որոնք կարող են գէթ մասամբ լրացնել դէպի ուսումն անյագ ծարաւ և բուռն ձգտում ունեցող հայ պատանուհու փափագը, դժբաղդաբար խիստ հազագիւտ են մեզանում։

Մենք, ի ներքոյ-ստորագրողներս, աւարտելով անցեալ. 1906—7 ուսումն. տար. տեղիս Եղիսաբէթեան դպրոցի դասընթացքը, արտասուալից աչքերով «մնաս բարեաւ» ասացինք ուսման այդ սրբազան տաճարին։ Հազիւ ուսման սէրը ծիլեր էր արձակել մեր սրտի և հոգու խորքերում, մենք ստիպված՝ հաշտվելով դառն իրականության հետ՝ բաժանվեցինք մայրախնամ կրթավայրից։ Եւ ոչ ոք, ըստ երևոյթին, չէր ուզում կամ չէր կարողանում հասկանալ մեր սրտի յուզմունքը և գնահատել մեր արտասուքի արժէքը։ Բայց ահա ազատարար նաւաստիների պէս մի անժոռանալի օր յայտնվեցին տեղիս հայոց բազմամարդ ուսուցչական խմբից բարեմիտ անձնաւորություններ, որոնք իրանց սրտին մօտ ընդունելով մի խումբ աշակերտուհիներիս դառն վիճակը, որ լռելեայն «ուսում տուէք մեզ, օգնության հասէք մեզ» էինք աղերսում, ինքնաբերաբար և ամենայն սիրով յանձնառու եղան առանց որևէ նիւթական վարձատրության զոհաբերել իրանց սուղ և անգնահատելի մի քանի երեկոյան ժամերը մեր անկատար ուսման շարունակության համար։ Այդ անմոռանալի անձնաւորություններն են՝—օրիորդ Մ. Գալաչեան, պ. պ. Ա. Ներսիսեան, Խաչ. Տէր-Ենոքեան, Գ. Տէր-Յակոբեան, Գ. Յովսէփեան և Գր. Ինճիկեան։

Եւ ահա այսօր մեր բարոյական և քաղցր պարտականությունն ենք համարում մեր երախտագիտական զգացումները հրապարակօրէն արտայայտել վերոյիշեալ մեր ուսուցչուհուն և ուսուցիչներին, որոնք յաղթելով ամեն տեսակ խոչընդոտներ՝ սիրալիր պատրաստակամությամբ ընդառաջ եկան մեր կարիքին և վեհանձնաբար ձեռք մեկնեցին մեզ՝ գէթ մասամբ լրացնելու մեր ուսման պակասը։

Կասկած չը կայ, որ մեզանում ամեն մի բարի, հանրօգուտ և սուրբ գործ առաջ չէ ընթանում առանց ընդհարվելու զանազան արգելքների հետ։ Զար ու սև նախանձից կուրացած խաւար հոգիները, որոնք գիտեն միայն անխղճաբար ոտնատակել ամեն մի ազնիւ ձեռնարկություն, յեղաշրջել իրողությունը և անձնական հասան կամ թայֆայական ատոր հաշիւները մաքրել հասարակական գործերում և դիւային բաւականությամբ ծաղրի ենթարկել նրանց, անպակաս են մեզանում։ Երբ նմանօրինակ տխուր երևոյթի հեղինակը ոգէ ազբոխն՝ է իր հաւատարիմ դաշնակիցների—թիրուս և թեթեսօլիկ գործիչների—հետ միասին՝ դա դեռ հասկանալի է։ Բայց երբ տեսնում ենք, որ իրանց առաջադիմության, կրթության նախանձախնդիր և շիտակ գործիչ հրատարակող անհատները ապարեզ են գալիս լրացնելու ոգէտ ազբոխի բամբասանքների պակասը և իրանց բերանից աջ ու ձախ, իրանց քիմքին անհաճոյ ամեն մի ազնիւ ձեռնարկության վրա թուք ու ցեխ են շպրտում՝ դա, եթէ չասենք անազնուություն, առնուազն անբարեխղճություն է։

Թող «ուսումնասէր» Michel-ները և նմանները «Վահակի» էջերից (№ 86) ծաղրեն ու մրոտեն մեր համեստ կրթարանը՝ «հաժալարան» կամ այլ հեգնական անուններ դրոշմելով, բայց մենք գոհ ենք և երջանիկ, որ բարեմիտ անձանց դեկավարությամբ շարունակում ենք մեր գործ...

Ուրեմն դէպ առաջ վստահ քայլերով...

Անխիղճ և անժիտ դատաւորներից մենք երես ենք դարձնում՝ մեր յարգանքն ուղղելով ազնիւ գործիչներին, գիտակցելով որ երբէք անպտուղ ծառին քար չեն գցում —քարը գցում են պտղատու ծառին։

Աշակերտուհիներ՝ Շ. Ասլանեանց, Վ. Մնացականեանց, Ան. Ղօյումչիբաշեանց, Փ. Զիլինկարեանց, Ի. Մնացականեանց, Տ. Պետրոսեան, Վ. Սաղաթելեան, Ա. Բուլանեան, Ս. Ներսիսեան, Մէյլեան, Ս. Առաքելեանց, Աղ. Ասլանեանց, Աբ. Մուրադեանց, Շ. Տէր-Յակոբեան, Թ. Թոփչեան, Հ. Շէկոյեան, Թ. Իգիթխանեան, Զթչեան։

—

Թաւրիզ, 22 մայիսի

«Վահակի» № 46-ում կարդացի Վանից գրված Կարէն-Սուրէնի նամակը։ Պարոնը նկարագրում է պատահարը. մատնանշում է դաւաճան դեկտ՝ի Դաւթին, բայց բոլորովին անծանօթ է թողնում ընթերցողին դէպի մի այդպիսի մեծ մատնիչ։ Ո՞վ է այդ Դաւիթը, որը այնպիսի մի չարիքի պատճառ դարձաւ, որը թէ նիւթական և թէ բարոյական տեսակէտներով չափ չունի։ Տասնեակ տարիների աշխատությունը, որը աւրիւնով, արցունքով, բազմաթիւ գործիչների նահատակությամբ էր ստեղծված, մի վայրկեանում ծովը թափվեց՝ յուսահատության, լքումի գիրկը նետելով մեր մատաղ ազգությունը։

Բայց սպասափելին—բարոյականն է։ Ո՞վ է այդ Դաւիթը, որ, հայ լինելով հանդերձ, հայությունն թշուառության համար բաբախող սիրտ չէ ունեցել իր կրծքի տախտակների տակ։ Ո՞վ է այդ դաւաճանը, որին դուրս ժայթքեց հայությունը, ապացուցանելու համար, որ իր նախահայր-ժանտիչների արժանաւոր սերունդներից դեռ մնացած է իր ծոցում։ Ի՞նչպիսի լաւատեղեակ, իր կոչման արժանի անձնաւորություն է եղել այդ մատնիչը, որը ըստ «Վահակի» Թղթակցի «մէկ երկու ժամվայ մէջ էնն պատրաստ իր ձեռքով ցոյց կը տայ և իր ձեռքով կը քանդէ»։ Ցնցումի էք, ընթերցող, որ Դաւիթը մի հասարակ մատնիչ չէ. նա թէ ծայրայեղ եռանդ ունի և թէ արժանի է «մատնիչ» անուան, բառի իսկական բուն իմաստով։ Այսպիսի մի հետաքրքրական անձնաւորության մասին պ. Կարէն-Սուրէնը բաւականանում է միայն որտեղացի լինելը մատնացոյց անելով, աւելի ոչինչ։ Չարիքների պատճառները պիտի արժատանան անել, այլապէս ինչ վատահությամբ գործել երբ գործի ամբողջ բաղդի տնօրինությունը մի «Դաւթից» պիտի կախում ունենայ։ Ի՞նչ շրջապատից ծնվեցին այս Դաւիթները։ Դարերնք շրջապատը, որ Դաւիթները չը բեղմնաւորվեն։ Վանի դէպքերի քննությունը մեծ լոյս կարող է սփռել մեր յեղափոխական գործունէության վրա։

Հաւատալ, որ սուլթանի շլացուցիչ մի քանի ոսկիների համար յեղափոխական գործիչ Դաւիթը մատնիչ դառաւ, այդ աւելի քան միամտություն կը լինեը։ Այս բոլորով հանդերձ՝ խնդիրը կարօտ է ատուգության և կատարեալ լուսաբանության՝ որի պարզվելուն, հաւատացած ենք, հետաքրքրությամբ սպասում են ամենքը։

Շուք

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ խմբագրության)

—

Խօսելով մեր «Գրականություն և կեանք» շաբաթաթերթի 2-րդ համարի մասին, «Մշակը» իր № 114-ի «Մատուլ» բաժնում գուրս է բերում, որ ես «Հայկական հարցը և քաղաքակրթված Եւրոպան» վերնագրով մի յօդուածի մէջ պաշտպան հանդիսանալով «Երկրի Զայնը» շաբաթաթերթի կարծիքին՝ ասել եմ, թէ նախ՝ հայկական հարց չը կայ և երկրորդ՝ ոչինչ չէ կարելի ապասել Եւրոպայից։

Որովհետև այդ երկու առաձգական պաբերությունից ընթերցողը կարող է մտքի շփոթություն առաջ բերել և ինձ սխալ հասկանալ, թոյլ տուէք նկատել, որ ես նպատակ չեմ ունեցել արտայայտել այնպէս, ինչպէս «Մշակն» է աշխատում ցոյց տալ։ Ասված է, որքան մարդիկ՝ այնքան կարծիք։ Որ «Մշակը» կարող է հայկական հարցի և «քաղաքակրթված» Եւրոպայի մա-

*) Որը ներկայիս իր ձեռք առած միջոցների շնորհիւ կանխատեսվել է։ Ց. Զ.

**) Ի զուր է զգուշացնում ընթերցողին, որ 20 դաս չէ եղել իւրաքանչիւր առարկայից. քանի որ ես այդպիսի բան չեմ ասել և իմ գրածիցս շատ պարզ երևում է, թէ քանի դաս է եղել։ Ց. Զ.

սին տարբեր կարծիք ունենալ, այդ նրա իրաւունքն է. ես չեմ կարող բռնանալ այդ հայեցակէտի դէմ. բայց իմ յօդուածից՝ թիւրիմաց գաղափար կազմելով սխալ եզրակացութիւն հանել և դնել նրան ոչ ցանկալի հակասական շրջանակի մէջ, այդ նկատելի դէպքում ես լռել չեմ կարող Ուստի արդարութեան տեսակէտից, թոյլ տուէք բացատրվելու։

Ահա իմ իսկական խօսքերը, որ հարկ եմ համարում մէջէ-մէջ առաջ բերել մի քանի հատուած։

«...Իր քաղաքականութեամբ, իր քաղաքակրթութեամբ և լուսաւորութեամբ հանդերձ նա (Եւրոպան) փառաւոր քաղաքակիր դաւանան հանդիսացաւ ամբողջ գիտակից-հակացող աշխարհի առաջ մեր արդար գատի պաշտպանելու։ Վերաբերմամբ։ 1878 թուին մարդասիրաբար համաձայնվեց, ստորագրեց Սան-Ստեֆանոյի դաշնագրին, բայց անմարդասիրաբար օսմանեան բռիբոզուկ սուլթանին թեկուզեց գաղտնի ծրագիր՝ կոտորել և ընաջնջել աղատութիւն ձգտել համարձակող «ռայոտա» հայերին։ Եւ դեռ մինչև այսօր էլ հայկական 61-րդ յօդուածը, շնորհիւ հէնց Եւրոպայի այդ կարծեցեալ մարդասիրութեան, ճաց մեռած տառ։ Ի՞նչ արդիւնք ունեցան Խրիմեան Հայրիկի, Մինաս Չերազի, Նար-Պէյի և Ս. Փափազեանի գնացած Բերլինի վեհաժողովը արևելեան հարցի մասին և պ. Ահարոնեանի ակնարկած Հաագայի կօնֆերանսը.—ոչինչ։

...«Մարդասէր»... Եթէ այդ է նշանակում «մարդասէր» լինելը, թքած այդպիսի մարդասիրութեան վրա։ Սուլթանը «հիւանդ մարդ» է, «մեծ մարդասպան», օրը ցերեկով կոտորել է տալիս հայերին և գաղթականութեան հոսանքի բերանը տալիս, բայց այնքան պախարակելի չէ նրա արարմունքը, որքան եւրոպական այն վեց պետութիւնների բռնած ընթացքը, որոնք գիտակցաբար աչք են փակում և շարունակում են դեռ խուլ մնալ այդպիսի բարբարոս գազանական և միջազգային օրէնքներին հակառակ գործողութիւնների հանդէպ և իրանց գրաւանոց տանը աւելի բարձր են համարում, քան մի քրիստոնեայ ազգի բնաջնջումը աշխարհից։

«Այդպէս պիտի լինի քաղաքակրթութեան, լուսաւորութեան և մարդասիրութեան գաղափարների արտայայտութիւնը։ Արդեօք չէն կեղծում, երբ նրանք կապկային ձևականութեամբ «աչքակապուկ» են խաղում իրանց շքեղ պարլամենտներում՝ չը դադարելով տաքտաք ճոռոմաբանել հայկական դատի մասին, որպէս թէ հայասէր, հայապաշտպաններ։ Խաբուսիկ յոյսեր, զուր ակնկալութիւններ»...

Ապա անցնելով պ. Տիգրան Չաուշի «Կաթողիկոսը իբրև քաղաքական գործօն» յօդուածին (տես «Երկրի Ձայնը» № 11), յայտնել եմ իմ համակարծիք լինելը այդ հարցի նկատմամբ և նրա դիտողութիւնների առիթով գրել եմ և հետևեալը.

«Ես զարմանում եմ, որ շատերը յայտնելը գրած հայ կաթողիկոսի վրա՝ նրանից մեծ բաներ են սպասում։ Ի՞նչ կարող է անել մի կաթողիկոս իր վարչական սահմանափակ իրաւունքներով. նա իբրև քաղաքական գործօն որևէ բան շինել չէ կարող հայկական դատի պաշտպանութեան գործում, բացի աղաչանք-պաղատանքից, որ անգութ Եւրոպայի կողմից միշտ մեռած է «ձայն բարբառոյ յանապատի»։ Քանի որ Թիւրքիան գոյութիւն կունենայ, կեղծ քաղաքակրթված Եւրոպան էլ բարեկամական ձեռք կը մեկնի նրան լրբաբար՝ աւելի հովանաւորելու և խրախուսելու գազանային վայրագ գործողութիւններ կազմակերպելու մէջ, մեր դատն վերջ չէ լինելու։

«Այո, Եւրոպան «հայկական հարց» չէ ճանաչում, որովհետև նրանից շահ չունի»։

Մթթէ սրանից կարելի է հետևցնել, թէ հայկական հարց չը կայ, իսկ եթէ ասել եմ, էլ ինչու համար է երկրորդ պարբերութիւնը՝ թէ ոչինչ չէ կարելի սպասել Եւրոպայից։ Երկու կարծիք, իրար հակասող, որոնց հաստատումը կասկածելի է և ինձ թւում է առեղծուած։ Ոչ ոք մեզնից չէ կարող ժխտել հայկական հարցի գոյութեան խնդիրը. երեսուն տարի է, ինչ նա գոյութիւն ունի, շատ պատմական փոթորկալից և արիւնոտ էջերով, Եւրոպական դիպլոմատիական սեղանի շուրջը։ Բայց իմ ակնյայտնի նպատակն է եղել հասկացնել, որ նա գոյութիւն ունի օդի մէջ կախված կամ իբրև մեռած տառ անշարժ թղթի վրա ձևակերպած՝ լոկ ձևականութեան համար կարծես։ Այսինքն անունը կայ, ամանումը չը կայ։ Այո, Եւրոպան ճանաչում է միայն արևելեան սարսափելի հարցը, որի ճիւղաւորութիւններից մէկն էլ կազմում է հայկական հարցը, մի չարաբաստիկ հարց, որին «քաղաքակրթված», «մարդասէր» Եւրոպան ճիշտ իբրև զէնք ու պատրուակ է ծառայեցրել իր ձեռքում իր սեփական շահերը առաջ տանելու, առաջ մղելու համար Թիւրքիայում։ Եւ մինչ պէտք է զգացվում ապացուցելու, որ հայկական հարց. ներկայումս աւելի է քաշվել, հեռացել իր լուծումից, քան առաջ։ Եւ մինչ կոյր ենք, չենք տեսնում, թէ ինչպէս այդ լուծումը մարում է աւելի սոսկալի փոթորիկների, աւերմունքների և արեան ծովի մէջ։ Այդ պատճառով է, որ նոյն յօդուածումս հարց եմ տուել.

«Վերջապէս ե՞րբ պէտք է խելքի գանք և համոզվենք, որ եթէ «հայկական հարց» գոյութիւն չունի, պատճառը Եւրոպան է»։

30 տարվայ պատմական «փառաւոր» դասերը և անցեալի դառն յուսախաբ և հիասթափեցնող փորձերը մինչ «Մշակին» վերջապէս այն գիտակցութեան և համոզման չը բերին, որ Եւրոպայի քաղաքական սառը խաղերն են մեզ հայերիս այս տրագիք, աննախանձելի վիճակին հասցրել, հէնց այդ խաղերն են, որ հայկական հարցի բարեյաջող լուծումը ջուրն են մաղել, հէնց այդ խաղերն են, որ Հայաստանի սարեր ու ձորեր ողողել են բազմաչարչար հայի արիւնով և այդ արեան մեր արդար դատի, արդար բողոքի ձայնը ..

Ես այստեղ ձեռնպահ եմ մնում փաստեր առաջ բերելու համար, որովհետև յիշեալ յօդուածս վերջացրել եմ այս խօսքով.

«Մենք էլի կը վերադառնանք այդ հարցին և փաստերով ցոյց կը տանք, թէ ինչպէս մեր 61-րդ յօդուածը ձգձգելիք և խաղալիք է դարձել հէնց նոյնիսկ Եւրոպայի նուրբ քաղաքագէտների լարած դաւերում»...

Այդ հարցով ես զբաղվելու եմ «Գրականութիւն և կեանք» շաբաթաթերթիս հետևեալ համարում։

Գրիգոր Բալասանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. ԱՐՓԻԱՐԻԱՆԻ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ

Սրտասահման հայ թերթերը վերջերս լուր բերին, թէ եգիպտական դատարանն Արփիարի մարդասպանին դատապարտել է մահվան պատժի կախաղանի միջոցով։

Ոճրագործի անձնաւորութիւնը, որ մինչև այսօր Պետրոս Հիւսնեան անուան տակ էր ծածկված և ամերիկեան Միացեալ-Նահանգների քաղաքացու անցագիր ունէր, ներկայումս ճանաչվել է իր ծանօթներից շնորհիւ այն հանգամանքի, որ Կահիրէում հրատարակվող «Լուսաբերը» նրա պատկերն իր ժամանակին տպել էր իր թերթում։

Ներկայումս Մարսէյլում հրատարակվող «Արմենիա» լրագրի վերջին համարում Միացեալ-Նահանգների Ուէստ-Հոպոկէն քաղաքից մի թղթակցութիւն ենք կարդում, որով պարզվում է ոճրագործի անձնաւորութիւնը։ Նամակագրի ասելով՝ Արփիարին սպանողի իսկական անուն-ազգանունն է Յովսէփ Ալիփունարեան. նա բնիկ Ալիփունար գիւղացի է, իսկ այդ գիւղը գտնվում է Դիարբէքիրից կէս ժամ հեռաւորութեան վրա դէպի արևմուտք և նրա բնակչութեան կէսը հայեր և կէսը քիւրդեր են։ Մարդասպանը, որ 27—28 տարեկան՝ անուս մէկն է, Ալիփնարցի Կոկոյի (Կիրակոսի) որդին էր ու երկար ժամանակ բնակվում էր Ամերիկայում և վերջերս միայն, գրեթէ մի տարուց ի վեր, Նիւ Եորկում մանրավաճառի խանութ էր բացել, որի ներքնայարկից. անցեալ օգոստոսին, Թավշանճեանի սպանութիւնից հազիւ մի ամիս յետոյ, գտնվեցին թունաւոր զէնքեր, պայթուցիկ նիւթեր և այլևայլ բաղադրութիւններ։

Ոճրագործն այն օրը, երբ իր խանութը խուզարկութեան էր ենթարկվել, «սպայ» Զիմիի ընկերակցութեամբ ուղևորվել էր Պրովիդէնս քաղաքը՝ ժամանակցելու համար այն կաճառի հանդէսին, որին անդամակցելիս է եղել։ Հանդէսի միջոցին տեղեկութիւն է ստանում, թէ իր խանութը խուզարկման է ենթարկվել Նիւ-Եորկում, և այլ ևս փախչում է ու իր հետքը կորցնում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

17 յունիսի

ԿԱԼՈՒԳԱ։ Մոսկվայում ապրող տեղացի Կօվրիգինը կտակել է 40,000 ռուբլի քաղաքային լօմբարտ հատատելու համար։ Նաև 12,000 ռուբլի՝ եկեղեցի կառուցանելու, և ահագին գեղեցիկ շինութիւնը զարդարելի և հիւանդանոցի համար։

ՎԱՐՇԱՎԱ։ Գրօխով կայարանում տեղի ունեցաւ գնացքների ընդհարում։ Ճանապարհորդներից մէկը վիրաւորված է, 7 հոգի ջարդուածքներ ստացան։ Վնասվեցին շոգեմեքենան և վագոններից վեցը։

ԼՎՕՎ։ Երգուեալների ժամանակութեամբ սկսվեց կոմս Պոտոցկու սպանութեան գործի քննութիւնը, որի մէջ մեղադրվում է ուսանող Սըչինսկին։

ՄՕՍԿՎԱ։ Բացվեց եկեղեցական խմբերի խմբապետների համագումարը։ Ներկայ են մօտ 200 հոգի Սիբիրի և Ռուսաստանի զանազան տեղերից։ Նախագահ ընտրվեց Պետերբուրգի պատգամաւոր Սրբանդէլսկին։

ՍԱՐԱՏՕՎ։ Կուզնեցկի և Սարատովի գաւառներում երևացել է տեղ տեղ մորեխ։

Արտաքին

17 յունիսի

ՏԵԱՆՑԻՆ։ Սկսվեցին Տեանցին-Պակոու երկաթուղագծի աշխատանքները։

ՊԱՐԻԶ։ «Թանը» և «Ժուրնալ դէ-Դէբան» քննադատելով Վալիանի ճառը, ասում են, որ այդ ճառը արժանի չէր արտասանվելու պարլամենտական ամբիոնից և անհամապատասխան է Ֆրանսիայի շահերին և Ֆրանսիացիների անգին մեծամասնութեան զգացմունքներին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ

ցանկանում է դասեր կամ որևէ յարմար պաշտօն ունենալ։
Դիմել՝ Ртищевская ул., № 7.
3—3

„Գուտտենբերգ"
գրախ. վաճառվում է
Է. ՌԸՆԱՆԻ
ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ
Թարգմ. Վ. Վարդանեանի
Բովանդակութիւն
Յիսուսի մանկութիւնն ու պատանեկութիւնը.—Նրա կեանքի առաջին տարիները.—Յիսուսի դաստիարակութիւնը.—Յիսուսի զարգացման գլխաւոր պայմանները.—Յիսուսի առաջին աշակերտները.—Նրա գաղափարները Հայր Աստուծոյ և մարդու կրօնի մասին.—Առաջին աշակերտները. Յովհաննէս Մկրտիչ.—Յիսուսի ճանապարհորդութիւնը Յովհաննէսի մօտ.—Նա մկրտվում է Յովհաննէսի ձեռքով.—Աստուծոյ թագաւորութեան մասին Յիսուսի ունեցած գաղափարների զարգացումը.—Յիսուս Կափառնայումի մէջ.—Յիսուսի աշակերտները.—Յիսուսի քարոզը լճի վրա.—Աստուծոյ թագաւորութիւնը հասկացվում է որպէս ազգասէրների թագաւորութիւն.—Յովհաննէսը բանտից դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ.—Յովհաննէսի մահը.—Նրա և Յիսուսի աշակերտների յարաբերութիւնը.—Առաջին փորձը.—Յիսուսի վերաբերմունքը դէպի կռապաշտներն ու սամարացիները.—Յիսուսի մասին կազմված առասպելի ծագումը, նրա անձնական գաղափարը իր գերբնական դերի մասին.—Յիսուսի գաղափարները Աստուծոյ թագաւորութեան մասին վերջնականապէս ձևակերպված.—Յիսուս հիմնում է եղեղեցին.—Յիսուսի հակառակորդները.—Յիսուսի վերջին ուղևորութիւնը Երուսաղէմ.—Յիսուսի թշնամիների արարքները.—Յիսուսի վերջին շաբաթը.—Յիսուսի բանտարկվելն ու դատումը.—Յիսուսի մահը.—Յիսուսի վարդապետութեան հիմնական բնոյթը։
Գինն է 1 ռուբլի, կազմված կայ 15 կ., 35 կ., 40 կ. և աւելի։ Պոստի ծախքով 1 ռ. 50կ.
դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гутенбергъ" Г. И. Галустяну.
(հ. շ.) 2—2

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
հողային սեկցիան նպատակ ունենալով հիմնել մանր վարկի ընկերութիւններ քաղաքներում և գիւղերում (գիւղական բանկեր), սրանով յայտնում է պ. պ. ուսուցիչներին և կողմնակի անձանց, որ պ. Յ. Տէր-Մատեփանեանը (Тифлисъ, 1-ая Тумановская ул., № 13)
Զրիաբար
ուսուցիչներին և 30 ռ. կողմնակի անձանց ուսուցանում է յունիսի 23 ից այդ բանկերի հաշուապահութիւնն ու գործավարութիւնը. նմանապէս ԶՐԻ բաժանում է զանազան ձեռնարկներ, բլանկներ և գրքեր։ Ցանկացողներին խնդրում ենք դիմել պ. Յ. Զ. Տէր-Մատեփանեանին։
Նախագահ հողային սեկցիայի՝
Կ. Խատիսեան
Քարտուղար՝ Յ. Յակոբջանեանց
(կ. հ.) 3—3

Մամուլի տակից դուրս եկաւ
Սահակ աւ.-ք. Սահակեանի
ՀԻՆ-ՈՒԽՏԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
հրատարակութիւնը։
Իմ բոլոր դասագրքերի պահեստը գտնվում է Դր. Մեսսնիկեանի մօտ։ Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ, Дворцовая, магазинъ Григ. Ст. Мясникова.
Սահակ ա.-ք. Սահակեան
(հ. հ. շ.) 10—3

Պահանջեցեք իսկական պտղալից ջրեր
Մ. ԼԱԳՈՒԶԻԻ եւ ԸՆԿ.
կատարելագործված գործարանի
Հոտը եւ անուշահոտութիւնը գերազանց
Գործարանին կից դէկօրատիվ բուսականութեամբ գեղեցիկ զարդարված տէրրասա, ուր կարելի է խմել սառուցի նման սառը ջուր։ Գործարանը գտնվում է Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մանթաշեանի տանը։
Տէլէֆոն գործարանի № 411։
(հ. կ.) 10—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամէն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեմինսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—79

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
վերսկսեց ընդունելութիւնը
Ներքին եւ ջղային
Հիւանդների
Պեատիգորսկում, Վերնի բուլվար № 14. տ. իշխ. Գիրէի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—15

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մեկնեց կովկասեան հանքային ջրերը և անցեալ տարիների նման ընդունելու է հիւանդներին վենեռական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հ. Լրանոց «Ռոսսիա»։
(ա. օ.) 100—69

ԱԼՄԵԶԱ
Թիւրաւոր. մայրաք. բժ. տեսչ. վիճակ. № 3475
Կովկասի և Անդրկասպեան երկրի միակ ներկայացուցիչը Ի. Ա. Աիսօրաձէն է։
Գլխաւոր պահեստ և գրասենեակ «Ալմեզա»-ի
Тифлисъ, Пушкинская ул. № 15.
ԱՏԱՄԻ ՅԱՒԸ
ՇՈՒՏ հանգստացնելու
եւ ատամն ու լնդերը ամրացնելու
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆ Է
ԱԼՄԵԶԱ
ՇԱՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ցուցահանդէսներում նաւերների է արժանացել
ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ՁՐԻ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Այդպիսիներին խնդրում ենք դիմել Սիսօրաձէի դրասենեակը,
Пушкинская, 15.
Օտարաղաղաթաղթերից կանխավճար ստանալով ուղարկում եմ վերադիր վճարով։
Դեղատներին զեղչ
Փորձնակ. սրուակը 40 կ. Իսկական սրուակը 1 ռ. 20 կ.
Դրաս. և պահեստի բաժնմ. Баку, Старо-Полицейская, № 14. Հեռագիրների հասցէ. Тифлисъ, Ахобадзе.
(հ շ.) 15—11

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵԶԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամէն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
СОЛ
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կնիքն ունի իր վրա։
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԻՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ"
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՐԻԳԱՅՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՈՎՈՒՄ ՕԴԵՍՍԱՅՈՒՄ ՐՈՍՏՈՎՈՒՄ Դ/Վ ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
Նիժէգորոդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ Վ.ՐԱ.
ԱՅԴՏԵՂ ԿԱՏ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵԶԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ակրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(հ. կ.) 100—36

Типографія „Экономія" Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.